

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը**

Ընդունված է 2018 թվականի
սեպտեմբերի 26-ին

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2004 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-104 օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի «ե» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | |
|--|----------------------------------|
| « ե) մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար՝ ներհանրապետական փոխադրումներում՝ | |
| - մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով՝ տարեկան | բազային տուրքի 10-ապատիկի չափով |
| մեկից ավելի մարդատար-տաքսի ավտոմոբիլներով՝ տարեկան | բազային տուրքի 50-ապատիկի չափով |
| միջպետական փոխադրումներում՝ | |
| - մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով՝ տարեկան | բազային տուրքի 20-ապատիկի չափով |
| մեկից ավելի մարդատար-տաքսի ավտոմոբիլներով տարեկան | բազային տուրքի 100-ապատիկի չափով |

»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 6
Ստեփանակերտ
ՀՕ-41-Ն